



ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆՍՈՒՇ

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԲԵՐԱԿ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Սիրելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:*

*Մաղթում ենք հաջողություն:*

1 Ո՞րն է բաց թողած բառը.

Այն, ինչից կազմված է ֆիզիկական մարմինը, կոչվում է \_\_\_\_\_:

- 1) ատոմ
- 2) մոլեկուլ
- 3) նյութ
- 4) բյուրեղավանդակ

2 Ո՞ր շարքում են միայն բարդ նյութերի բանաձևեր.

- 1) Si, Na<sub>2</sub>O, HBr, Mg
- 2) AgNO<sub>3</sub>, H<sub>2</sub>O<sub>2</sub>, O<sub>2</sub>, KOH
- 3) P<sub>4</sub>, O<sub>3</sub>, Ca, Ba
- 4) NaOH, MgCl<sub>2</sub>, K<sub>2</sub>O, H<sub>2</sub>O

3 Հետևյալ գործընթացներից որո՞նք են ֆիզիկական.

- ա) հեղուկ օդից ազոտի ստացումը
- բ) մագնեզիումի այրումը թթվածնում
- գ) յոդի սուբլիմացումը
- դ) սոդայի փոխազդեցությունը աղաթթվի հետ

- 1) ա, բ
- 2) բ, դ
- 3) ա, գ
- 4) գ, դ

4 Ո՞ր խառնուրդի բաղադրիչները կարելի է բաժանել գոման եղանակով.

- 1) կավճափոշու և ջրի
- 2) կաթի
- 3) քացախաթթվի ջրային լուծույթի
- 4) կերակրի աղի ջրային լուծույթի

5 Հետևյալ մասնիկներից որո՞նք են քիմիապես բաժանելի.

ա) թթվածնի ատոմը  
բ) ջրի մոլեկուլը

գ)  ${}^2_1H$  իզոտոպը  
դ) ամոնիակի մոլեկուլը

- 1) ա, բ
- 2) բ, գ
- 3) գ, դ
- 4) բ, դ

6

Չյան փաթիլում  $n$  ռ քիմիական տարրի զանգվածային բաժինն է առավել փոքր.

- 1) թթվածին
- 2) ջրածին
- 3) ազոտ
- 4) ածխածին

7

Ո՞րն է սելենի հիմնական վիճակում գտնվող ատոմի արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.

- 1)  $\dots 2s^2 2p^4$
- 2)  $\dots 3s^2 3p^4$
- 3)  $\dots 4s^2 4p^4$
- 4)  $\dots 3s^2 3p^6$

8

Ինչպե՞ս է կոչվում քիմիական տարրերի մի քանի պարզ նյութերի ձևով հանդես գալու երևույթը.

- 1) սուբլիմացիա
- 2) ադսորբցիա
- 3) ալոտրոպիա
- 4) իզոմերիա

9

Որքա՞ն է մագնեզիում – 24 իզոտոպի միջուկում պրոտոնների թիվը.

- 1) 24
- 2) 12
- 3) 11
- 4) 13

10

Ո՞ր նյութի մոլեկուլում է ատոմների միջև կապը կովալենտային բնույթի.

- 1)  $Cl_2$
- 2)  $NH_3$
- 3)  $MgO$
- 4)  $CaBr_2$

11

Որո՞նք են բաց թողած բառերը հետևյալ նախադասությունում.

*Գլխավոր ենթախմբերում կարգաթվի մեծացմանը զուգընթաց տարրերի ատոմային շառավիղները \_\_\_\_\_ է, մետաղային հատկությունները \_\_\_\_\_:*

- 1) մեծանում, թուլանում
- 2) մեծանում, ուժեղանում
- 3) փոքրանում, ուժեղանում
- 4) փոքրանում, թուլանում

12

Հետևյալ հավասարումներին համապատասխան ռեակցիաներից ո՞րը համասեռ չէ.

- 1)  $2\text{NO} + \text{O}_2 = 2\text{NO}_2$
- 2)  $2\text{CO} + \text{O}_2 = 2\text{CO}_2$
- 3)  $\text{S} + \text{O}_2 = \text{SO}_2$
- 4)  $2\text{H}_2 + \text{Cl}_2 = 2\text{HCl}$

13

Ի՞նչ բյուրեղավանդակ է հատուկ ավազին՝  $\text{SiO}_2$ .

- 1) ատոմային
- 2) մոլեկուլային
- 3) իոնային
- 4) մետաղային

14

Հետևյալ գազերից որի՞ հարաբերական խտությունն է ըստ նեոնի 2,2.

- 1)  $\text{CO}$
- 2)  $\text{SO}_2$
- 3)  $\text{O}_2$
- 4)  $\text{CO}_2$

15

Հետևյալ օքսիդներից ո՞րը կփոխազդի ալկալու հետ.

- 1)  $\text{ZnO}$
- 2)  $\text{CaO}$
- 3)  $\text{N}_2\text{O}$
- 4)  $\text{Ag}_2\text{O}$

16

Ո՞ր նյութի հետ է միանում ծծումբը սենյակային ջերմաստիճանում.

- 1)  $\text{H}_2$
- 2)  $\text{Fe}$
- 3)  $\text{O}_2$
- 4)  $\text{Hg}$

17

Հետևյալ նյութերից ո՞րն է ծծմբական թթվի արտադրության հումք.

- 1) Գլաուբերի աղ
- 2) գիպս
- 3) երկաթի կուլչեդան
- 4) կալիումի սուլֆատ

18

Ո՞ր նյութից պատրաստված տարայում չի կարելի պահել պղնձարջասպի լուծույթը.

- 1) ապակի
- 2) արծաթ
- 3) երկաթ
- 4) պղինձ

19

Ջրի և հետևյալ նյութերից որի՞ փոխազդեցությունից կառաջանա ամենաթեթև գազը.

- 1)  $\text{CaH}_2$
- 2)  $\text{Ca}_3\text{P}_2$
- 3)  $\text{Ca}_3\text{N}_2$
- 4)  $\text{CaC}_2$

20

Ի՞նչ զանգվածով (գ) ածխի այրումից կանջատվի 2412 կՋ ջերմություն, եթե ածխի այրման ջերմաքիմիական հավասարումն է  $\text{C}_{(այ)} + \text{O}_{2(գ)} = \text{CO}_{2(գ)} + 402 \text{ կՋ}$ :

- 1) 108
- 2) 72
- 3) 7,2
- 4) 36

21

Ո՞ր փոխարկումների դեպքում են նախ ալկալի, ապա՝ թթու օգտագործում.

- 1)  $\text{FeCl}_2 \rightarrow \text{Fe}(\text{OH})_2 \rightarrow \text{Fe}(\text{NO}_3)_2$
- 2)  $\text{Ca}(\text{OH})_2 \rightarrow \text{Ca}(\text{NO}_3)_2 \rightarrow \text{CaCO}_3$
- 3)  $\text{HCl} \rightarrow \text{NaCl} \rightarrow \text{AgCl}$
- 4)  $\text{H}_2\text{SO}_4 \rightarrow \text{Na}_2\text{SO}_4 \rightarrow \text{BaSO}_4$

22

Ո՞ր աղերով է պայմանավորված ջրի կարբոնատային կոշտությունը.

- 1)  $\text{Ca}(\text{HCO}_3)_2, \text{Mg}(\text{HCO}_3)_2$
- 2)  $\text{CaCl}_2, \text{MgSO}_4$
- 3)  $\text{NaHCO}_3, \text{KHCO}_3$
- 4)  $\text{MgSO}_4, \text{KHCO}_3$

23

Ալյումինի և կալցիումի կարբիդների խառնուրդը ջրով մշակելիս ի՞նչ գազային նյութեր են առաջանում.

ա)  $\text{CH}_4$ , բ)  $\text{H}_2$ , գ)  $\text{C}_2\text{H}_2$ , դ)  $\text{C}_2\text{H}_6$

- 1) ա, բ
- 2) ա, գ
- 3) բ, դ
- 4) բ, գ

24

Ո՞ր նյութի ջրային լուծույթի և ճարպի փոխազդեցությունից է առաջանում հեղուկ օձառ.

- 1) NaOH
- 2) KOH
- 3) NaCl
- 4) KCl

25

Ո՞րն է  $\alpha$ -գլյուկոզի բնական պոլիմերը.

- 1) ցելյուլոզը
- 2) օսլան
- 3) սախարոզը
- 4) եռացետիլցելյուլոզը

26

Նավթամշակման  $n$ ՞ր գործընթացում քիմիական ռեակցիաներ չեն ընթանում.

- 1) թորման
- 2) կատալիտիկ կրեկինգի
- 3) ջերմային կրեկինգի
- 4) ռեֆորմինգի

27

Ո՞րն է կովի կաթից ստացվող ճարպի հիմնական բաղադրամասը.

- 1) գլիցերինի եռստեարին
- 2) գլիցերինի եռպալմիտին
- 3) գլիցերինի եռօլեին
- 4) բուտիրապալմիտաստեարին

28


Ո՞ր մեծությունն են անվանում ճանապարհ:

- 1) Մարմնի շառավիղ-վեկտորի փոփոխության մոդուլը:
- 2) Հետագծի երկայնքով մարմնի անցած հեռավորությունը:
- 3) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող վեկտորը:
- 4) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող հատվածի երկարությունը:

29

Ուղղաձիծ հավասարաչափ փոփոխական շարժում կատարող մարմինը 20 վ-ում նկարում պատկերված **A** կետից տեղափոխվում է **B** կետը: **A** կետում  $v_A = 40$  մ/վ, իսկ **B**-ում՝  $v_B = 20$  մ/վ: Որքա՞ն է մարմնի արագացման մոդուլը, և ինչպե՞ս է այն ուղղված:

- 1)  $1 \text{ մ/վ}^2$ , դեպի աջ
- 2)  $2 \text{ մ/վ}^2$ , դեպի աջ
- 3)  $1 \text{ մ/վ}^2$ , դեպի ձախ
- 4)  $2 \text{ մ/վ}^2$ , դեպի ձախ



30

Ինչպե՞ս են փոխվում հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմնի արագության հորիզոնական  $v_x$  և ուղղահիգ  $v_y$  արոյեկցիաների մոդուլները թռիչքի ընթացքում: Օղի դիմադրությունն անտեսել:

- 1)  $v_x$ -ն աճում է,  $v_y$ -ը՝ նվազում
- 2)  $v_x$ -ը նվազում է,  $v_y$ -ը՝ աճում
- 3)  $v_x$ -ը մնում է հաստատուն,  $v_y$ -ն սկզբում նվազում է, հետո՝ աճում
- 4) ոչ մեկը չի փոխվում

31


Ո՞ր բանաձևն է ճիշտ արատահայտում Նյուտոնի երկրորդ օրենքը շրջանագծային հավասարաչափ շարժման դեպքում:

- 1)  $F_R = m \frac{v^2}{R}$
- 2)  $F_R = m \frac{2\pi}{T} R$
- 3)  $F_R = m\omega R$
- 4)  $F_R = 2\pi Rm$

32

Ո՞ր նկարում են ճիշտ պատկերված Երկրի և Արեգակի փոխազդեցության ուժերը:

- 1) ա
- 2) բ
- 3) գ
- 4) դ



33

Չսպանակը նախ ձգեցին  $x$  չափով, ապա ևս նույնքան: Համեմատե՞ք առաջին և երկրորդ դեպքերում կատարված աշխատանքների  $A_1$  և  $A_2$  արժեքները:

- 1)  $A_2 = A_1$
- 2)  $A_2 = 2A_1$
- 3)  $A_2 = 3A_1$
- 4)  $A_2 = 9A_1$


34

Որքա՞ն է  $H$  բարձրությամբ սեղանից հորիզոնական ուղղությամբ  $v_0$  սկզբնական արագությամբ նետված մարմնի կինետիկ էներգիան գետնից  $h$  բարձրությունում: Օղի դիմադրությունն անտեսել:

- 1)  $\frac{mv_0^2}{2} + mgH - mgh$
- 2)  $\frac{mv_0^2}{2} - mgH + mgh$
- 3)  $mgH + mgh - \frac{mv_0^2}{2}$
- 4)  $mgH - mgh - \frac{mv_0^2}{2}$

35 Անոթում լցված գազը սեղմում են շարժական մխոցով: Ո՞ր գրաֆիկն է արտահայտում գազի մոլեկուլների կոնցենտրացիայի կախումը ծավալից:

- 1) ա
- 2) բ
- 3) գ
- 4) դ



36 Ազրեգատային ո՞ր վիճակում է դիֆուզիան ավելի արագ ընթանում:

- 1) պինդ
- 2) հեղուկ
- 3) գազային
- 4) դիֆուզիայի արագությունը կախված չէ նյութի ազրեգատային վիճակից

37 Ի՞նչ միավորով է չափվում նյութի տեսակարար ջերմունակությունը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Ջ
- 2) 1 Ջ/(կգ·Կ)
- 3) 1 Ջ/կգ
- 4) 1 Ջ/Կ

38 Ինչպե՞ս է փոխվում գազի ջերմաստիճանն ադիաբատ ընդարձակման պրոցեսում:

- 1) աճում է
- 2) նվազում է
- 3) չի փոխվում
- 4) սկզբում աճում է, հետո՝ նվազում

39 Ո՞ր ջերմաստիճանում է գոլորշիանում ջուրը:

- 1) միայն 100 °C-ից բարձր ջերմաստիճանում
- 2) միայն 20 °C-ից բարձր ջերմաստիճանում
- 3) միայն 100 °C ջերմաստիճանում
- 4) կամայական ջերմաստիճանում

40 Երկու անշարժ կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլն  $F$  է: Որքա՞ն կլինի այն, եթե լիցքերից յուրաքանչյուրի մոդուլը փոքրացնենք  $n$  անգամ:


- 1)  $\frac{F}{n^2}$
- 2)  $\frac{F}{n}$
- 3)  $nF$
- 4)  $n^2 F$

41 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Էլեկտրական լիցքը սկալյար մեծություն է:
- 2) Կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտը համասեռ է:
- 3) Էլեկտրական դաշտի լարվածությունը վեկտորական մեծություն է:
- 4) Լիցքի վրա ազդող էլեկտրական դաշտի ուժն ուղիղ համեմատական է լիցքի մեծությանը:

42 Նկարում պատկերված շղթայում  $R$  դիմադրությունում հոսանքի ուժը  $I_0$  է: Որքա՞ն է հոսանքի ուժը  $2R$  դիմադրությունում:

- 1)  $\frac{I_0}{2}$
- 2)  $\frac{I_0}{3}$
- 3)  $I_0$
- 4)  $2I_0$




43 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ամպերաչափի դիմադրությունը պետք է շատ փոքր լինի այն տեղամասի դիմադրությունից, որին միացված է:
- 2) Ամպերաչափը միացնում են շղթայի տեղամասին հաջորդաբար:
- 3) Ամպերաչափը միացնում են շղթայի տեղամասին զուգահեռ:
- 4) Ամպերաչափը նախատեսված է հոսանք չափելու համար:

44 Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1) 2 Օմ
- 2) 3 Օմ
- 3) 18 Օմ
- 4) 216 Օմ




45 Էլեկտրոնը մտնում է համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին զուգահեռ: Ինչպիսի՞ շարժում կկատարի այն:

- 1) ուղղագիծ հավասարաչափ շարժում
- 2) ուղղագիծ շարժում՝ աճող արագությամբ
- 3) հավասարաչափ շրջանագծային շարժում
- 4) ուղղագիծ շարժում՝ նվազող արագությամբ

46 Մի դեպքում հաստատուն մագնիսը մետաղե օղակի մեջ մտցնում են հյուսիսային բևեռով, մյուս դեպքում՝ հարավային բևեռով: Ո՞ր դեպքում օղակում կմակաձվի հոսանք:

- 1) ա դեպքում
- 2) բ դեպքում
- 3) ոչ մի դեպքում
- 4) երկու դեպքում էլ



47

Ճառագայթը հարթ հայելու վրա ընկնում է  $40^\circ$  անկման անկյան տակ: Որքա՞ն է անդրադարձած ճառագայթի և հայելու մակերևույթի կազմած անկյունը:

- 1)  $140^\circ$
- 2)  $80^\circ$
- 3)  $50^\circ$
- 4)  $40^\circ$

48

Ո՞րն է ճիշտ շարունակությունը:

Լույսի ճառագայթը զրոյից տարբեր անկման անկյան տակ օպտիկապես խիտ միջավայրից նոսր միջավայր անցնելիս.

- 1) անկման անկյունը մեծ է բեկման անկյունից:
- 2) անկման անկյունը փոքր է բեկման անկյունից:
- 3) անկման անկյունը հավասար է բեկման անկյանը:
- 4) անդրադարձման անկյունը մեծ է բեկման անկյունից:

49

Ո՞րն է կոչվում ոսպնյակի կիզակետային հեռավորություն:

- 1) Երկու կիզակետերի հեռավորությունը:
- 2) Ոսպնյակի մակերևույթների միջև հեռավորությունը:
- 3) Կիզակետի և ոսպնյակի օպտիկական կենտրոնի միջև հեռավորությունը:
- 4) Ոսպնյակի մակերևույթների կորության կենտրոնների միջև հեռավորությունը:

50

Դադարի վիճակում ավտոմեքենայի լուսարձակների առաքած լույսի արագությունը գետնի նկատմամբ  $c$  է: Որքա՞ն կլինի լույսի արագությունը, եթե ավտոմեքենան շարժվի  $v$  արագությամբ:

- 1)  $c$
- 2)  $\frac{c}{2}$
- 3)  $c - v$
- 4)  $c + v$

51

Ո՞ր երևույթն է կոչվում ֆոտոէֆեկտ:

- 1) Լույսի ազդեցությամբ նյութից էլեկտրոններ պոկվելու երևույթը:
- 2) Լույսի ազդեցությամբ ընթացող քիմիական ռեակցիան:
- 3) Ատոմի կողմից ֆոտոնի առաքման երևույթը:
- 4) Ատոմի կողմից ֆոտոնի կլանման երևույթը:

52

Ո՞րն է ճիշտ շարունակությունը:

Համաձայն Թոմսոնի մոդելի՝ ատոմը.

- 1) կազմված է դրական լիցքավորված միջուկից, որի շուրջը պտտվում են էլեկտրոններ:
- 2) դրական լիցքավորված գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:
- 3) էլեկտրաչեզոք գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:
- 4) գունդ է, որի ներսում կան պրոտոններ և էլեկտրոններ:

53

Քանի՞ էլեկտրոն է պարունակում այլումինումի  $^{27}_{13}\text{Al}$  չեզոք ատոմը:

- 1) 27
- 2) 13
- 3) 40
- 4) 0

54

Մարդու կենտրոնական նյարդային համակարգի ո՞ր բաժինն է վերահսկում ջերմակարգավորումը, ծարավի և քաղցի զգացողությունը.

- 1) կամուրջը
- 2) երկարավուն ուղեղը
- 3) ենթատեսաթումբը
- 4) տեսաթումբը

55

Մարդու ո՞ր հիվանդությունն է պայմանավորված ներզատական գեղձի թերզործառույթով.

- 1) լորձայտուցը
- 2) բազեդովյանը
- 3) ակրոմեգալիան
- 4) հսկայությունը

56

Ռոտե՞ղ է կատարվում առարկաների ձևի, մեծության, գույնի տարբերակումը.

- 1) ցուպիկներում
- 2) սրվակներում
- 3) ոսպնյակում
- 4) վերլուծիչի կենտրոնական բաժնում

57

Ո՞րն է կազմում մարդու միջին ականջի մաս.

- 1) ձվածն (օվալածն) պարկիկը
- 2) սալը
- 3) լսողական արտաքին անցուղին
- 4) խխունջը

58

Մարդու օրգանիզմում ո՞ր վիտամինի անբավարարության դեպքում են զարգանում մաշկային հիվանդություններ և տեսողության վատացում թույլ լուսավորության պայմաններում.

- 1) C
- 2) A
- 3) D
- 4) B<sub>1</sub>

59

Ո՞րն է գլխի կմախքի շարժուն ոսկորը.

- 1) ստորին ծնոտը
- 2) վերին ծնոտը
- 3) քթոսկրը
- 4) այտոսկրը

60

Քանի՞ ողերից է բաղկացած մարդու ողնաշարի պարանոցային բաժինը.

- 1) 4-5
- 2) 3-4
- 3) 7
- 4) 12

61

Ո՞ր հյուսվածքն է կազմում մարդու կմախքային մկանների հիմքը.

- 1) էպիթելայինը
- 2) հարթ մկանայինը
- 3) շարակցականը
- 4) միջաձիգ գոլավոր մկանայինը

62

Ո՞րն է լեյկոցիտների հիմնական դերը մարդու օրգանիզմում.

- 1) ագլյուտինացիայի իրականացումը
- 2) արյան մակարդումը
- 3) վարակների դեմ պայքարը
- 4) թթվածնի տեղափոխումը

63

Որտե՞ղից է սկսվում մարդու արյան շրջանառության փոքր շրջանը.

- 1) աջ փորոքից
- 2) ձախ փորոքից
- 3) աջ նախասրտից
- 4) ձախ նախասրտից

64

Ո՞ր խմբի արյուն կարող է ընդունել արյան փոխներարկման ժամանակ արյան առաջին խումբ ունեցող մարդը.

- 1) առաջին
- 2) առաջին և երկրորդ
- 3) առաջին և չորրորդ
- 4) առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ

65

Իմունիտետի տեսակներին վերաբերող ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) կյանքի ընթացքում օրգանիզմում ձևավորված բնական ձեռքբերովի իմունիտետը փոխանցվում է սերնդեսերունդ
- 2) բուժիչ շիճուկի կազմում ստացված հակամարմինները պայմանավորում են արհեստական ակտիվ իմունիտետը
- 3) պատվաստումից հետո օրգանիզմում առաջացած հակամարմինները պայմանավորում են արհեստական պասիվ իմունիտետը
- 4) ժառանգաբար փոխանցվում է բնական բնածին իմունիտետը

66

Ինչպե՞ս է մարդու կրծքավանդակը բաժանվում որովայնի խոռոչից.

- 1) ստամոքսով
- 2) թոքանզով
- 3) ստոծանիով
- 4) միջկողային մկաններով

67

Ո՞ր է անցնում օդը անմիջապես քթի խոռոչից մարդու ներշնչման ժամանակ.

- 1) կոկորդ
- 2) շնչափող
- 3) բրոնխներ
- 4) քթմսկան

68

Ինչպե՞ս են փոխվում շնչառական շարժումները մարդու օրգանիզմում թթվածնի անբավարարության դեպքում.

- 1) խորանում են
- 2) դանդաղում են
- 3) հաճախանում են
- 4) իրականացվում են ընդհատումներով

69

Որտե՞ղ է գտնվում մարդու շնչառական կենտրոնը.

- 1) թոքերում
- 2) երկարավուն ուղեղում
- 3) միջկողային մկաններում
- 4) ուղեղիկում և ողնուղեղում

70

Ի՞նչ միացություն չի պարունակում մարդու թուրքը.

- 1) լիզոցին
- 2) մալթազ
- 3) պոլիպին
- 4) պեպսին

71

Մարդու օրգանիզմում ի՞նչն է խոչընդոտում սննդագնդիկի թափանցմանը շնչափող կլման պահին.

- 1) փափուկ քիմքը
- 2) ըմպանը
- 3) մակկոկորդը
- 4) լեզուն

72

Մարդու մարսողական ուղու ո՞ր բաժնում է սկսվում սպիտակուցների մարսումը.

- 1) ստամոքսում
- 2) բերանի խոռոչում
- 3) բարակ աղիում
- 4) տասներկումատնյա աղիում

73

Մարդու մարսողական համակարգի ո՞ր բաժնում են բացվում լեղածորանն ու ենթաստամոքսային գեղձի արտատար ծորանը.

- 1) ստամոքսում
- 2) հաստ աղիում
- 3) կույր աղիում
- 4) տասներկուամատնյա աղիում

74

Ի՞նչն է գտնվում մարդու երիկամի կեղևային շերտում.

- 1) պատիճը, մազանոթային կծիկը և բրգածև կազմավորումը (փոքր բաժակը)
- 2) մազանոթային կծիկը, ծնկածև և հավաքող խողովակները
- 3) ոլորուն, ծնկածև և հավաքող խողովակները
- 4) պատիճը, մազանոթային կծիկը, ոլորուն խողովակները

75

Քանի՞ լիտր երկրորդային մեզ է առաջանում մեկ օրում առողջ մարդու օրգանիզմում.

- 1) 1.5-2
- 2) 2.5-2.7
- 3) 150-170
- 4) 120-150

76

Ի՞նչ ընկալիչներ կան մարդու մաշկում.

- 1) շոշափական, լուսազգաց և ջերմազգաց
- 2) ջերմազգաց, ցավազգաց և քիմընկալիչներ
- 3) շոշափական, ջերմազգաց և ցավազգաց
- 4) շոշափական, գունազգաց և ցավազգաց

77

Ո՞ր միացությունն է պաշտպանում գերկարճալիք ուլտրամանուշակագույն ճառագայթներից.

- 1) մելանինը
- 2) տուբուլինը
- 3) ադրենալինը
- 4) հակամարմինը

78

Ի՞նչ է կատարվում մարդու օրգանիզմում միջավայրի ցածր ջերմաստիճանային պայմաններում.

- 1) նեղանում են մաշկի արյունատար անոթները
- 2) աճում է դեպի մաշկ հոսող արյան քանակը
- 3) մեծանում է ջերմատվությունը
- 4) քրտնարտադրությունն ուժեղանում է

79

Նշված կառույցներից ո՞րն է (են) մասնակցում մարդու բոլոր տեսակի պայմանական ռեֆլեքսների առաջացմանը.

- 1) ուղեղիկը
- 2) ողնուղեղը
- 3) մեծ կիսագնդերի կեղևը
- 4) ողնուղեղը և մեծ կիսագնդերի կեղևը

80

Ի՞նչ է բնորոշ ոչ պայմանական ռեֆլեքսներին.

- 1) մենահատուկ են
- 2) ձեռքբերովի են
- 3) ժամանակավոր են
- 4) ժառանգվում են